ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ն 313-Ա
« 20 » ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 2024Թ.

ՀՈՎԻԿ ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆԻՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԵՐԿԱՐԱՑՎԱԾ ԱՐՁԱԿՈՒՐԴԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ և 160-րդ հոդվածներով, «Տարածքային կառավարման մասին» օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի փետրվարի 16-ի «Հանրակրթական ուսումնական հաստատության և տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մանկավարժական և վարչատնտեսական աշխատողների պաշտոնների անվանացանկը, դրանց նկարագիրը սահմանելու մասին» N 216-Ն որոշմամբ սահմանված թիվ 1 հավելվածի «1. Վարչատնտեսական մասի համակարգող՝ հանրակրթական ուսումնական հաստատության» մասի 25-րդ կետով և հիմք ընդունելով Հովիկ Մնացականյանի դիմումը՝

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. 2024 թվականի սեպտեմբերի 23-ից մինչև հոկտեմբերի 25-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետի աշխատակազմի ենթակայության ՀՀ Վայոց ձորի մարզի Վայքի հիմնական դպրոց ՊՈԱԿ-ի վարչատնտեսական մասի համակարգող Հովիկ Մնացականյանին տրամադրել 2023-2024 թվականների աշխատանքային տարվա ամենամյա երկարացված արձակուրդը՝ 25 աշխատանքային օր տևողությամբ:
2. Հովիկ Մնացականյանի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում նրա պարտականությունների կատարումը դնել նույն կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Հայարփի Մարգարյանի վրա:
3. Աշխատանքի ներկայանալու ժամկետը՝ 2024 թվականի հոկտեմբերի 28-ին:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Recoverable Signature

X

Signed by: KOLYA MIKAELYAN 3507670100

Կ. ՄԻՔԱԵԼՅԱՆ

Ք.Եղեգնաձոր